Հավելված N 2
2024 թվականի հունվարի 1-ին կնքված
N ԴՏՊ-1141-11010/24 պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 1

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ, ՍԵՌԱԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» |
| Դրամաշնորհի N | **ԴՏՊ-1141-11010/24** |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 03.01.2025 – 31.12.2025 |
| Հաշվետու ժամանակահատված | 03.01.2025-31.03.2025 |
| Ներկայացման օր | 03.04.2025 |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | Տաթևիկ Աղաբեկյան, նախագահ |

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

| |
|---|
| *Միջոցառման անվանում և նկարագրություն* |
| 1. **Թրաֆիքինգի և շահագործման, սեռական բռնության ենթարկված անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայությունների տրամադրում:** |
| *Օրենսդրությամբ նախատեսված կարգով և պահանջներին համապատասխան կացարանով ապահովում* |

Մեթոդական պահանջներին համապատասխան անհրաժեշտ պայմաններով ապահովված կացարանի տրամադրում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերին, հատուկ կատեգորիայի զոհերին, հավանական զոհերին, սեռական բռնության ենթարկված անձանց:

**2. Օրենսդրությամբ նախատեսված կարգով բնաիրային օգնության տրամադրում:** Կացարանում և կացարանից դուրս գտնվող մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերին, հատուկ կատեգորիայի զոհերին, հավանական զոհերին, սեռական բռնության ենթարկված անձանց սննդի, հագուստի, կոշիկի և հիգիենայի միջոցներով ապահովվում:

**3. Օրենսդրությամբ նախատեսված կարգով անհրաժեշտ փաստաթղթերի տրամադրմանն և վերականգմանն աջակցում:** Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերին, հատուկ կատեգորիայի զոհերին, սեռական բռնության ենթարկված անձանց բացակայող կամ անվավեր համարվող փաստաթղթերի տրամադրման կամ վերականգնման աշխատանքների կազմակերպում:

**4. Օրենսդրությամբ նախատեսված կարգով բժշկական օգնության ապահովմանն աջակցություն:** Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերին, հատուկ կատեգորիայի զոհերին, հավանական զոհերին, սեռական բռնության ենթարկված անձանց համաձայնությամբ և ըստ անհրաժեշտության՝ նրանց կողմից առողջապահական հաստատություններ դիմելու՝ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու համար կազմակերպչական աշխատանքների իրականացում:

**5. Թրաֆիքինգի և շահագործման զոհերին, հատուկ կատեգորիայի զոհերին, հավանական զոհերին,սեռական բռնության ենթարկված անձանց օրենսդրությամբ տրամադրվող ծառայությունների շրջանակում սոցիալական դեպքի վարում:** Թրաֆիքինգի և շահագործման զոհերին, հատուկ կատեգորիայի զոհերին, հավանական զոհերին,սեռական բռնության ենթարկված անձանց օրենսդրությամբ նախատեսված ծառայությունները (ծառայություններից որևէ մեկը) տրամադրելիս անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ Սոցիալական աջակցության մասին օրենքի դրույթներով՝ ունենալով կազմված անհատական սոցիալական ծրագրեր:

**6. Օրենսդրությամբ նախատեսված կարգով սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրում:** Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի, հատուկ կատեգորիայի զոհերի, հավանական զոհերի, սեռական բռնության ենթարկված անձանց մոտ առաջացած սոցիալ-հոգեբանական խնդիրների լուծմանը, սոցիալական վերականգնմանը և ինտեգրմանն ուղղված աշխատանքների իրականացում՝ օրենսդրության պահանջներին համապատասխան: Հետտրավմատիկ սթրեսի հաղթահարմանը, հոգեկան առողջության պահպանմանը և բարելավմանն ուղղված մասնագիտական աշխատանք՝ շահառուների կողմից ինքնաբավության, անկախ կյանք վարելուն ուղղված անհրաժեշտ հմտությունների ձեռք բերման նպատակով:

7. **Օրենսդրությամբ նախատեսված կարգով իրավաբանական խորհրդատվության տրամադրում**
Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի, հատուկ կատեգորիայի զոհերի, սեռական բռնության ենթարկված անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն առնչվող իրավաբանական (անհրաժեշտության դեպքում նաև փաստաբանական) աջակցության տրամադրում:

**8. Օրենսդրությամբ նախատեսված կարգով «Թեժ գիծ» ծառայության մատուցում**
Թեժ գծի գործառնության ապահովում 24/7 ռեժիմով և դրա միջոցով առաջնային խորհրդատվության տրամադրում, անհրաժեշտության դեպքում նաև ուղղորդման իրականացում:

**9. Օրենսդրությամբ սահմանված կարգով կրթության կամ նախնական մասնագիտական կրթության հասանելիության ապահովում:** Թրաֆիքինգի և շահագործման զոհերին, հատուկ կատեգորիայի զոհերին, հավանական զոհերին, սեռական բռնության ենթարկված անձանց հանրակրթական դպրոցներում, ինչպես նաև նախնական, միջին մասնագիտական կրթության իրավունքի իրացման հնարավորության ապահովում:

**10. Օրենսդրությամբ սահմանված կարգով մասնագիտական հմտությունների ձեռքբերման, վերամասնագիտացման, աշխատանքի տեղավորման, ինչպես նաև պետությունից կամ համապատասխան այլ կազմակերպություններից սոցիալական աջակցության ստանալուն ուղղված համալիր աշխատանքների իրականացում:**
Համագործակցության ապահովում Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների հետ՝ օրենքով սահմանված կարգով զբաղվածության պետական ծրագրերում, ինչպես նաև աջակցության այլ ծրագրերում թրաֆիքինգի և շահագործման զոհերին, հատուկ կատեգորիայի զոհերին, հավանական զոհերին, ինչպես նաև սեռական բռնության ենթարկված անձանց ընդգրկվելու վերաբերյալ:

**11. Թրաֆիքինգի և շահագործման, սեռական բռնության ենթարկվելու ռիսկի խմբում գտնվող անձանց սոցիալ-հոգեբանական խնդիրների լուծման ուղղությամբ աշխատանքների իրականցում:** Շահագրգիռ մարմինների հետ միջգերատեսչական համագործակցության իրականացում, որի շրջանակում լուծում կտրվեն թրաֆիքինգի և շահագործման, սեռական բռնության ենթարկվելու ռիսկի խմբում գտնվող անձանց սոցիալ-տնտեսական և սոցիալ-հոգեբանական խնդիրներին:

**12. Զոհի կամ հատուկ կատեգորիայի զոհի անվտանգ վերադարձի ապահովմանն ուղղված աշխատանքների իրականացում:** ՀՀ արտաքին գործերի նախարարության, Ոստիկանության, ինչպես նաև այլ շահագրգիռ գերատեսչությունների հետ համագործակցության շրջանակում, անվտանգության անհրաժեշտ միջոցառումների

իրականացման հիման վրա, օրենսդրությամբ սահմանված կարգով զոհի կամ հատուկ կատեգորիայի զոհի անվտանգ վերադարձի կազմակերպում:

**13. Օրենսդրությամբ սահմանված կարգով պետության կողմից տրամադրվող միանվագ դրամական փոխհատուցմանն ուղղված միջնորդության ներկայացում:** Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերին, հատուկ կատեգորիայի զոհերին միանվագ դրամական փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ միջնորդության կազմում և ներկայացում Լիազոր մարմնին:

**14. Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի և կանխարգելմանն ուղղված իրազեկում:** Իրազեկման միջոցառումները ներառել են խնդրի լայն իրազեկմանն ուղղված հանդիպում–քննարկումներ, տպագրական նյութերի, այդ թվում՝ տեղեկատվական թերթիկների պատրաստում և տարածում , վերապատրաստումների իրականացում:

**15. Նախարարության առաջարկությամբ՝ սույն միջոցառմամբ նախատեսված մատուցված ծառայությունների և կատարած այլ աշխատանքների ներկայացում <<Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի հարցերով խորհրդին (այսուհետ՝ խորհուրդ) և խորհրդին կից աշխատաքային խմբին, ինչպես նաև Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնացման հանձնաժողովին:** Նախարարության առաջարկությամբ պարբերաբար, մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնացման հանձնաժողովին ներկայացվել է մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերին, հատուկ կատեգորիայի զոհերին, հավանական զոհերին, սեռական բռնության ենթարկված անձանց տրամադրված աջակցության ծառայությունները, վերջիններիս հետ տարվող սոցիալ վերականգնողական աշխատանքները, դեպքերին վերաբերելի խնդիրները:

2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացը՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գրանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:

1. Հաշվետու ժամանակահատվածում կացարանային աջակցություն ստացել են.

- Նախկինում ծրագրում ներառված շահառուներ- 1 անձ
- Նոր նույնացված շահառուներ – 1 անձ,
- Նախանույնացման փուլում գտնվող շահառուներ – 13 անձ
- Սեռական բռնության ենթարկված անձ ֊ 1 անձ

**2.** Ծրագրի գործողության համաձայն՝ հաշվետու ժամնակահատածում բնաիրային աջակցություն տրամադրվել է կացարանային աջակցություն ստացող բոլոր շահառուներին, նաև կացարանում չգտնվող շահառուներին և նրանց ընտանիքներին:

**3.** 3 շահառուների աջակցություն է տրամադրվել փաստաթղթերի ձեռքբերման գործընթացում, այդ թվում՝ ՀԾՀ, անձնագիր, Ապաստան հայցողի քարտ: ԵՎս 13 անձի աջակցություն է տրամադրվել իրենց փաստաթղթերի ամբողջացման, հավաքագրման համար երկրից մեկնելու նպատակով:

**4.** Բժշկական աջակցության տրամադրումը.

Կազմակերպվել են՝

- 1 անձի ՝ «Ավան» Հոգեկան առողջության կենտրոնում պրոֆիլակտիկ այցեր, դեղորայքի ձեռքբերում:
- 1 անձի տրամադրվել է դեղորայք:
- 1 անձ գրանցվել է «Վարդանանց» պոլիկլինիկայում, անցել է մի շարք հետազոտություններ, այդ թվում սեռավարակների, ընդունել է համապատասխան դեղորայք :
- 1 շահառու ստացել է ատամնաբուժական աջակցություն Առողջապահության ազգային ինստիտուտում:

**5.** Դեպքի վարում.

**Նախկինում ծրագրում ներառված շահառուներ**

**2 անձ,** ովքեր բնակվում են կացարանում և ստանում են անհրաժեշտ ծառայությունները կացարանի շրջանակներում, ևս

**13 անձինք,** որոնց տրամադրվել է սոցիալական խորհրդատվություն, ուղղորդումներ համապատասխան կառույցներ:

**Ծրագրում ներառված նոր շահառուներ**

15 **անձ ,** ում տրամադրվել է խորհրդատվություն: Հանդիպումների ընթացքում իրականացվել է կարիքի գնահատում, այնուհետև միջամտության պլանի մշակում, որից հետո կազմակերպվել է դեպքի շուրջ աշխատանքը:

Կազմակերպվել են 1 շահառուի և երեխայի պարբերաբար հանդիպումները: Նաև կազմակերպվել են շահառուի «Զորակ» շուրջօրյա մասնագիտացված խնամքի կենտրոն ՊՈԱԿ տեղափոխելու փաստաթղթային աշխատանքները:

**6.** Հոգեբանական աջակցություն տարամադրվել է.

- *Սեռական բռնության ենթարկված անձի/անձանց խորհրդատվություն*՝ **12 ժամ,**
- *Թրաֆիքինգի ենթարկված անձի/անց խորհրդատվություն*՝ ***4 ժամ:***

**7.** Հաշվետու ժամանակահատածում **իրավաբանական/փաստաբանական աջակցություն**

տրամադրվել է **3** շահառուի, որոնցից՝

- *Նախաքննության փուլում գտնվող*՝ **Թրաֆիքինգի ենթարկված - 3 անձինք,**
- *Սեռական բռնության ենթարկված* – **1 անձ**
- *Դատական լսումների փուլում գտնվող*՝ **Թրաֆիքինգի ենթարկված – 3 անձինք**

Կառույցի մասնագետի կողմից կազմակերպվել են շահառուների տեղափոխումը բնակության վայրից դատարան լսումներին մասնակցելու համար, քննչական բաժին նախաքննության, դատաբժշկական, դատահոգեբուժական և այլ գործողություններում մասնակցության համար, պարբերաբար կապ է հաստատվել շահառուների գործերով զբաղվող իրավապահ համակարգի ներկայացուցիչների հետ ընթացքի վերաբերյալ տեղեկատվության ստացման և հետագա գործողությունների պլանավորման հետ կապված: Ավարտվել են որոշ շահառուների դատական, նաև քննչական գործընթացներ ի օգուտ տուժողների:

8. **«Թեժ գծի»** ծառայության շրջանակներում 24/7 ռեժիմով գործել է առաձին հեռախոսահամար, որով կապ է հաստատվել շահառուների և նրանց ընտանիքի անդամների հետ:
9. Ընթանում են կացարանում բնակվող 2 շահառուի համար բնակարան և աշխատանք գտնելու գործընթացները:
10. Ներկայացվել են թվով 1 միջնորդություն շահառուի միանվագ աջակցության:
11. Կազմակերպվել է 13 օտար քաղաքացիների անվտանգ վերադարձը իրենց բնակության երկիր:
12. Ծարունակվել են հանդիպումները ՀՀ գրեթե բոլոր Տարածքային կենտրոնների սոցիալական աշխատողների և հետաքրքրված այլ աշխատակիցների հետ, որոնք ավարտվել են 13.03.2025թ-ին: Հանդիպումների ավարտին մասնակիցներին տրամադրվել է գիտելիքի գնահատման թերթ՝ արդյունավետությունը որակելու համար, ինչն էլ վերլուծվել է ՍԲՃԿ փորձագետի կողմից, և վերլուծության արդյունքները տրամադրվել են Նախարարության գործընկերներին:
13. **Նախարարության առաջարկությամբ՝ սույն միջոցառմամբ նախատեսված մատուցված ծառայությունների և կատարած այլ աշխատանքների ներկայացում «Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի հարցերով խորհրդին (այսուհետ՝ խորհուրդ) և խորհրդին կից աշխատաքային խմբին, ինչպես նաև Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնացման հանձնաժողովին:**
    ՍԲՃԿ աշխատակիցը 2024թ.-ի հունվար ամսից սկսած մասնակցել է նույնացման հանձնաժողովի բոլոր նիստերին, որտեղ հնարավորություն է ունեցել թե տեղեկանալու նոր բացահայտված դեպքերի վերաբերյալ, և թե ներկայացնելու աջակցություն ստացող շահառուների վերաբերյալ տեղեկատվություն: Մասնակցության միջոցով հնարավորություն է նաև ունեցել քննարկելու աջակցության ընթացքում առաջացած խնդիրներն ու փորձելու գտնել միասնական լուծումներ:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

| |
|---|
| Առկա չեն: |

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:

| |
|---|
| Առաջանում են դժվարություններ շահառուների մասին տեղեկատվություն ստանալու հետ կապված: |

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

| |
|---|
| Սույն հաշվետվությունը համարվում է ծրագրային առաջին եռամսյակի հաշվետվություն: |

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:

| |
|---|
| - |

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Գլխավոր քարտուղար՝ Ս. Մուրադյան | Տնօրեն՝ Տաթևիկ Ադաբեկյան |
| ------------------------------------------- | ------------------------------------------- |
| (ստորագրություն) Կ.Տ. | (ստորագրություն) Կ.Տ. |